

Մարամելիքի խէր¹⁾ Մորայ մէջ մեռաւ Իսմիլ խանուս²⁾, Մորամելիքի մէրն³⁾ էր, մնաց որպա՛վարի:

Միտք էրաւ, ըսաց.— Զանձ, իս տ'ընիմ⁴⁾ իմ ժողովուրդ ժողովիմ, պիրիմ մէկ թաղարիք⁵⁾ տեսնամ. իմ մօտէն մէկ տղայ տիւս չ'ինկեաւ, մէկ տղայ ընձը հարկաւուր ը, ընը միր աղբին տիրութիւն էնը, մինք չ'մնանք շեւար⁶⁾. համայ⁷⁾ կըպը մէկ փէրիզ ընը, իրան մօտէն մէկ տղայ բհամ կեայ⁸⁾. ընիք ճամբեսիք մատ⁹⁾ Մըհեր, էնու մըտէն հիւին էնիք¹⁰⁾, բեալքիմ կեայ իմ կուշտ, ընձը մէկ տղայ ընը:

Ելաւ, էրկու մարդ ճամբեսից. կեացին մատ Մհեր, կ'ասին.— Մհեր, Իսմիլ խանըմ զմի ճամբեսիր ի քի խամար, հիւի կ'անի, որ անտուտ կեայ, ձի էլ տղայ վեար ախշոին չ'կտըրուը:

Մհերն էր, կ'ընը կ'ասը.— Տիւ կեացէք, Աստուած ձի¹¹⁾ խիտ, իս իրիք օր իմ կնկան մօտէն խաբար կ'առնիմ, նուր կ'կեամ: Եդ էրկու մարդ դարձան կեացին դեախ Իսմիլ խանըմ: Էն էլ իրիք օր խատ ուր կնկան մասալհաթ¹²⁾ էրաւ, կնիկ դեաստուր¹³⁾ չ'իտու: Ելաւ, գեաղտիկ¹⁴⁾ կնկնից կինաց (համայ կնիկ խաբար էլաւ, որ կինաց էն բանին): Էնդուցայ յիտ¹⁵⁾ ութ օր մնաց մատ Իսմիլ խանըմ: Իսմիլ խանըմ, ինչ ութ օր լմացաւ, ալախաւ¹⁶⁾, էլաւ էրաղով, որ զինք տ'ընէր տղով: Էսաց.— Մհեր, կինս', ըսաց, կինս' քիւ¹⁷⁾ տուն, ամայ քիւ կնկան մը զիւրցը էդա*) բան:

1) Հայր: 2) Տիկին: 3) Մայր: 4) Տ', տը', տի— պէտք է: 5) Պատրաստութիւն: 6) Խեղճ: 7) Բայց: 8) Գոյանայ: 9) Մօտ: 10) Խնդրենք: 11) Չեր: 12) Խորհուրդ: 13) Իրաւունք, թոյլտուութիւն: 14) Ծածուկ, գաղտնի: 15) Նորանից յետոյ: 16) Իմացաւ, զարթնեց: 17) Քո:

*) Ա. վարիանտով Սանասար կամենում է մանուկ Մարամելիքին մկրտել տալ, բայց Մարամելիքի կինը չի թողնում և անունը Մելիք է դնում: Մի բանի տարուց յետոյ երբ Սանասարը մի անգամ կանգնած էր տանիքի վերայ, տեսաւ թէ ինչպէս Մարամելիքը մի գոմէշ մէկ թեւի, միւսը միւս թեւի տակն առած՝ տուն բերեց. «Հէյ վան, հէյ վան, ասաց նա, էսի ի՛նչիս իմ տուն քեան»